



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱԽՀ ԼՈՒՍՖՈՂԿՈՄԱՏԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՆԴԱԿԵՐԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒ

Թ. ԹՈՐՈՄՈՒՅԵԱՆ

ՇԻԱՆՑՈՒԹԵՐՆ ՈՒ ՆԲԱՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ
ԿԵՐՊԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹ

69
Բ - 80

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՁՈՆԴԻ

ՅԵՐԵՎԱՆ

1932

01 OCT 2010

ՀԱԽՀ ԼՈՒԺ-ՌԴԿՈՄՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՆՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԵՍԻՏՈՒՑ

69 ԿՐ.
թ-80

թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

ԵՒՆԱՅԱԼԻԹԵՐՆ ՈՒ ՆՄԱՆՑ ԳԱՐԾԱԾՈՒԹՅԱՆ
ԿԵՐՊԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ

ՅԵՐԵՎԱՆ

1932

Պետհաստի տպարան
Քլավլիս № 8951
Պատ. № 3190
Տիրաժ 1000



492

38

ՇԻՆԱՅՆՅՈՒԹԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՄ

Շինարարական արվեստը, Հայաստանում, ավելի քան
չերկու հազար տարի գոյություն և ունեցել անընդհատ: Հա-
զար ինը հարյուր տարի առաջ կանգնեցրած և անվթար մեր
որերին հասնող շենքերի շինարարական որենքների բավա-
կանին կատարելությունը և հետզհետե զարգացումը, ապա-
ցուցում ե, վոր մեր թվականից շատ առաջ քակված և այդ
մեծ արվեստի խանձարությունը:

Հայաստանն իր բնակչությամբ բնականարար քա-
ռեր արվեստագործությունն ավելի պիտի զարդանար և քա-
ռը պիտի ծառայեր իր բնակչությունը հնուց այնքան եր գնահատված, վոր
հատկապես այդ ճյուղում մասնագիտացած անձանց, մեր հին
մատենագիրներից վորանք «Ճարտարապետս քարի» են ան-
վանել:

Սկզբից Հայաստանի մեջ շատ տեսակ քարեր են ոգտա-
գործվել իր բնակչությունն առաջին մեր թվականի նախոր-
յակին, արդեն սովորած են յերեսում կրաշաղախի գուծա-
ծոթյունն ու տաշված և կոկված քարերով մեծամեծ քա-
րուկիր շենքեր կառուցելը փոխանակ մեծագանգված քարե-
րով անշաղախ պատեր շինելը:

Բնական ե, վոր կրի զյուտը մեծ ծառայություն մատու-
ցեց շինարարական արվեստին, զգալիորեն թեթեացրեց ծանր
աշխատանքները և շենքերին տվեց ավելի վայելչություն
և յերկարատե կլանք:

Քարի ու կրի հետ գուցընթացաբար, իբրև շինանյութ՝ պա Շերաբար գործադրիլ են նաև ուրիշ նյութեր, ինչպես որ աղյուս, փայտ, յերկաթ, կապար և այլն, վորոնց մասին ծանոթություն տալը թերևս անոգուտ չի լինի: Վորովէնետեկ զիխավոր շինանյութը Հայաստանում քար ու կիրն ե, իսկ ուրիշ նյութեր գործածել են ըստ տեղական պայմանների ու առանձին պահանջների, ուստի նախ սկսենք քարի ու կրի գործածության կրպերից, վորոնցով նախնիք ղեկավարվել են յերկար դարեր:

Կրաշաղախը, վոր Հայաստանի շինարարության մեջ մոտավորապես յերկու հազար տարի գերակշռող տեղ ե զրավել, անշուշտ սովորել են անմիջական հարեւան յե, կիրների, մեծ ազգերի արվեստագետներից: Բայց յէ՞ր ե կրի զյուտը և ինչպես ե անցել Հայաստան: Նյութն ուսումնասիւլը չե իմ այժմյան նպատակը: Կրաշաղախի զյուտի մասին գիտնական արվեստագետները տակավին հաստատուն յեզրակացության չեն յեկել, թե վ՞ե՞ ժամանակ և վ՞ե՞ր յերկուում կատարվեց կրաշաղախի զյուտն ու սկսվեց գործածությունը, կամ վ՞ե՞ր ազգի սեփականությունն ե այս անդնահատելի զյուտի պատիվը: Մեր թվականից շատ առաջ, հետախուզություններ կատարող գիտնականները Բարեկոնում դաել են կրաշաղախի հետքը, վոր գործածված եր թե պատերի ե թե ծեփի համար: Ասորա-Քաղղեխայում կրաշաղախի գործածության չափազանց հազվագյուտ լինելը վերագ ում են փայտի պակասության և նույն իսկ համարում են ավելի Հեռավոր Արևելքի ազգերի զյուտ: Հետազայում այս յել կրի իշխանությունը ժառանգող պարսիկների ժամանակ բավական ընդհանրացած եր կրի գործածությունը:

Իսկ մի ուրիշ զիտնական հաստատում ե, վոր յետուրացիք ունեցել են կրի վառաւանների, վորոնք իբրև կրաքար գործածել են նույնիսկ մարմարը: այդ պատճառով հիմնիվեր քանդել են մարմարից շինված հուշարձանները՝ և քարերից կրի պատրաստել: Մի քրանսիացի գիտնական 1820 թ. հտամիացում՝ հայախուզական հանապարհորդություններ կատարելու

ժամանակ տեսել եր այս լետուրական կրի վառարանները և պատմում ե, թե ինչ վիճակի մեջ եր դաել, վորոնց մեջ լըցված են յեղել քարերը, բայց դեռ չկառված: Վառարանում լցված քարերի մեջ յեղել են վոչ միայն հին հուշարձաններից քանդված մարմար, և գեղաքանդակ բեկորներ, այլև ճարտարաւարվեստագետների գործ, մարմարե ընտիր արձանների կտորներ. և ինչպես յերեւում ե, շատ յերկար ժամանակ ե տեսել մարմարե շենքերը քանդելով քարերից կիր վառելու ուվորությունը, վորի դեմ Հոռմի պապերից մեկը թեև արդելք ե զրել, այսուամենայնիվ այդ արգելքը ապարդյուն և անցել այն ժամանակ:

Vitreuve, հոռմայեցի հոչակավոր ճարտարապետը, վորն ապրում եր դեռ մեր թվականի առաջին դարի սկզբներին, ուշի մի աշխատություն, վորի մեջ մանրամասն բացատրում և պարզաբանում ե կրի գործածության թե հին և թե իր ժամանակի ճարտարապետական որենքներն ու շինելակերպը, մասնավորապես խոսելով կրաշաղախի պատրաստության ծեմի մասին: Նույնիսկ այժմ իտալիայում շարունակվում ե Vitreuve-ի ցուց տված ձևով կրաշաղախ պատրաստելը, վորը նույնքան ամուր ու տեսական ե լինում, ինչպես հնումն իրագործվածները:

Վորովինետեկ ալյուտեղ յես չեմ զբաղվելով կրաշաղախի պատմական ուսումնասիրությամբ, ուստի կարեոր եմ համարում այսքանն ասել, վոր կրաշաղախի գործածությունն ընդհանրացավ այն յերկրներում, ուր շենքերը բացառապես քարով ու թրծված ազյուտով եյին կառուցվում: Ուստի շատ պարզ ե, վոր Հայաստանն իրեւ քարաշատ յերկիր պիտի ընդգրկեր քարաշեն կառուցվածքը և զրա հետ միասին նաև կրաշաղախի գործածությունը: Իսկ թե կրաշաղախի գործածությունը Արևելքից ե յեկած թե Արևմուտքից, գեռ ևս պարզ չե, (Հավանորեն Արևելքի ազդեցություն պիտի մինի, նկատի ունենալով ուրիշ բազմատեսակ արևելլան ազդեցություններ Հայաստանի ճարտարապետության վրա) անշուշտ առիթ կունենանք ի մոտո խոսելու այդ նյութի մա-

սին: Ալստեղ մեր քննության առարկան պետք է լինի, թե Հայաստանում արվեստագետները ինչ աստիճան հաջողություն են ունեցել կիրան ու կրաշաղախը պատրաստելու մեջ և ինչ ձեռվ են պատրաստել, քարի վճր տեսակն են ընտրել կրաշաղախով հաստատուն զանդված կազմելու համար:

Յերկար դարերի ընթացքում ավանդաբար մեզ հասել են կրաշաղախի զանդված կազմելու որենքները, սակայն թողներդի մեզ անել, վոր յերկրագնդի զանազան կետերում միորինակ չեն այդ որենքները. վերջին դարում, նախնիքների այդ գյուղը վոչ միայն արժանացավ մեծ արվեստագետների բարձր գնահատությանը, այլև հետազոտության առարկա դարձրին նրա թե պատմականը և թե բնագիտական հատկությունները, նրա հետ նաև կրաշաղախի ուրիշ նյութերի հետ բաղադրելու համեմատական չափերը:

Վերջին ժամանակի գիտական լուրջ քննությունները հաստատապես ապացուցեցին, վոր պատմական ժամանակների ընթացքում շինությունների համար գործածված կրաշաղախի շուրջը հյուսված զանազան առասպելները վոչ մի արժեք չունեն, այլ մեծ նշանակություն են ունեցել կրաքարի տեսակները և կրաշաղախը կազմելու համար միմիայն ավազի համեմատական չափերը. Ուսումնասիրությունների և գործնական փորձերի հիման վրա, ներկայիս ակադեմիական հրատարակությունները տալիս են մեզ կրաքարի տեսակները վորոշելու, քարն ալբերով կրի փոխելու, կրացած քարը մարելու, փոշիացնելու կանոններ, ինչպես նաև շաղախի մեջ խառնվելիք ավազի վորակները ու բաղադրության չափերը, նայած գործածության նպատակին:

Մասնավորապես Հայաստանում ինչ հաջողությամբ են գործածել կրաշաղախը, վմբքան հաստատուն և տեսական են յեղել նրանց կազմած զանդվածները. սրան անվիճելի ապացուց են 15—20 դար առաջ կանգնեցրած և մեզ հասած հնագույն հուշարձանները, վորոնք ամեն տեսակ քննազատությունից բարձր են: Ուստի կասկած չի կարող լինել, վոր նախնիք շատ լավ ըսրոնած են յեղել կրաշաղախի հատկու-

թյունը և նպատակահարմար ձեռվ պատրաստելու կանոնները. այժմ մեզ մնում ե ամենահավանական յեղակացությունները հանել հնում գործածված կրաշաղախի և ընդհանրապես քարովկիր շինությունների մասին, վորոնց բազմադարյան կյանքն ու միանգամայն հաստատուն մինչև մեր որերուն հասնելը լիովիլ զրավական են հին արվեստագետների ունեցած հմտության և փորձառության:

* *

Բոլորին հայտնի յե, վոր կիրն ստացվում ե կրաքարը հատկապես շինված փուան (հնոցի) մեջ մինչև բաշեկ դառնալու ալբերով: Կրաքարի տեսակներից կախված ե ուժեղ կամ թույլ կրի ստացումը: Ենարարական արվեստի մեջ ընդունված ե զիմավոր յերկու տեսակի կիր, պարագ կամ ուժեղ և բուլ:

Պարագան կիրն ստացվում ե կրաքարի ընտիր տեսակից, վորն այրվելուց և կրի փոխարկվելուց հետո, շինարարության մեջ գործադրելու համար յենթարկվում ե շիջուցման: Շիջուցման չորս զանազան յեղանակներ կան, նայած գործածության նպատակին համաձայն:

1. Մեծ սահմանական առաջ առաջ խառնելուց հետո համելու—Զբաղեց տաշտի մեջ թանի նման հարնելուց հետո, տաշտից քամում են զետնի մեջ փորլած քառակուսի կամ բոլորակ հորի մեջ: Այս յեղանակով հարված և հորի մեջ քամված կիրը, վոր շուտով թանձրանում ե, ողային հաղորդակցությունից չեղաքացնելով, յերկար ժամանակ պահպան ե առաջն իր ուժը կորցնելու: Սակայն այս յեղանակով հարված և յերկար պահված կիրը գործածվում ե բացառապես ծեփերի և քիչ անդամ պատերի համար:

2. Ինքնակամ մարում կամ նվազում:—Այս ինքնակամ մարումը հաճախ տեղի յե ունենում ճարտարապետի կամքից անկախ կամ անժամանակ կանուխ ստացվում ե կիրը շինության հատկացրած վալրի մոտ և յերկար ժամանակ մնում ե ողի ազգեցության տակ առանց գործածվելու, կամ շինքից

ավելանալով կարիք և լինում շտեմարանել մի տեղ, վորով
կիրն ինքնակամ մարում և և փոշիանալով կորցնում իր ու-
ժի գգալի տոկոսը:

3. Զբարից տաշի մեջ յնկդիմելով մարում յել նույն տաճքի
մեջ անմիջապես ավագր խառնելով շաղախի պատրաստում:—
Վորմանայության մեջ այս տեսակը առնասարակ գործ
են ածում Բաղկանյան յերկրներում. Ջրալից տաշտի մեջ վո-
րոշ քանակությամբ կիրը հալեցնելուց հետո, առաջացած
ջերմությունը գեռ չսառած, անմիջապես խառնում են ավա-
զը և միանդամայն տաք վիճակում լցնում պատի մեջ. տե-
ղական ճարտարապետները և վորմանադիրները համոզված են
վոր այս յեղանակով գործածված կիրը պատի մեջ թե ավե-
լի շուտ կչորանա, ածխաթթուն ողից արագ կծծի, և թե
ավելի պինդ կձուլվի միջի խիճերի և արտաքին յերեսների
քարերի հետ:

4. Զբարսկմամբ մարում:—Զբարսկմամբ մարելն ընդ-
հանրապես ընդունված և թե Յեկոպայում և թե ասիսկան
շատ յերկրներում և առնասարակ կատարվում և հետեւալ յե-
ղանակով: Բանվորները, նախ չմարած կիրը փոռում են մի
հարթ գետնի վրա ու վրան գույշերով ջուր օրսկում: Սըրս-
կըված ջուրը հետզհետե ծծվում և կրից և կրի կոշտերն
ոկսում են լախանավ պատովիլ ու ֆլովիլ. լավ կրի ծավալն
ավելանում և յերեք անդամ, գույնը՝ մաքուր սովորակ, իսկ
գոյացած կրափոշին չափազանց նուրբ, մատների արանքում
շրջափելիս, ճարպոտ մարմնի պապավորություն և թողնում,
Առաջին փուլածքի մարումը վերջանալուց հետո, բանվորնե-
րը հավաքելով մի կուլտ են կազմում մարված հարթավայրի
կողքին: Կրկին փոռում են նույն տեղի վրա չմարած կիր և
շարունակում միենուն գործողությունները, ինչ վոր առա-
ջին անդամի համար. այսպես հաջորդաբար շարունակելով,
չենքի համար ըերված ամբողջ կիրը մարում են, փոշիաց-
նում և հետզհետե ավելացնելով նախկին կույտի վրա, մի
մեծ գեղ են կազմում: Այս գործողությունը վերջացնելուց
անմիջապես հետո, առանց յերկար ժամանակ դեղը բացոթյա

թողնելու, բանվորները շտապում են համեմատական չափով
կիրն ու ավագ նըլիեռա իրար և պատրաստել շաղախի հա-
մար: Կրաշաղախի համար պատրաստելը ևս ունի իր վորոշ
կանոնները, վոր հետեւալն ե: Շենքին մոտ, մի հարթ տե-
ղի վրա վորին կրի կալ են անվանում, նախ ավազը փռում
են 2—3 սանտիմ հաստությամբ, սակայն մի վորոշ ծավա-
լաչափ ամանով հաշվված, ավազը շատ լավ տարածելուց հե-
տո, վորպեսզի ամբողջ տարածության վրա միենույն թան-
ձրությունն ունենա, միենույն ծավալաչափ ամանով փռ-
չիացած կիրը խնամքով փռում են ավազի վրա հավասար
թանձրությամբ տարածելով. հետո կրի վրա դարձլալ ավագ+
այսպես հաջորդաբար կիր ու ավազ միմյանց վրա փռելով
կազմում են մի մեծ կուլտ, վորը վոչ միայն պատրաստ և
շաղախի վերածելու համար, ալլն յերկար ժամանակ ողի
ազդեցությունից ազատ պահպում ե ավազի շերտերի տակէ
Մնում և այժմ կալի մի կողմից հետզհետե թիակներով վերց-
նել և շաղախը պատրաստել:

Կրաշաղախի կազմելու համար չի կարելի անխտիր ամեն
տեսակ ավագ գործածել, վորովհետև հաստատության կամ
ամրության տեսակետից միենույն տրդյունքը չեն տուիս
Կրաշաղախի համար ամենալավը զետի ավազն և, քան աղ+,
բյուրների, քարահանքերի կամ ուրիշ ցամաք զետնի մեջ
գտնված հանքերի ավազը, Գետի ավազը միշտ ազատ և
կինդանական, բուսական կամ հողային գոյացության խառ-
նուրդներից, ցամաք զետի մեջ գտնված ավազը, լիթե հար-
կը պահանջե գործածել, անհրաժեշտ և մի մեծ փայտե տաշ-
տի մեջ խնամքով յերկար լվանալ, մինչև վոր կատարելա-
պես կմաքրվի հողային ու բուսական խառնուրդներից. լվա-
նալու գործողության ընթացքում, յերբ ջուրը պարզվում
և, այն ժամանակ կարելի յե խառնել կրի հետ և անընդհատ
շաղկել այս գործողության հատուկ թիակով, մինչև վոր
գաղփածի մեջ տեսնվի կրի և ավազի հավասար խառնվածքը:

Կրի հետ ավազի խառնուրդի համեմատական չափն, ըստ
գործածության զանազան նպատակների, տարբերվում ե:

Վորովհետև ընդհանուր որենք ե լեղած համեմատական չափեցը միայն ծավալով վորոշել, ուստի կրաշաղախի համար 1 խ. մետր կրին 1^½ լից 3—4 խ. մետր ավագ ե խառնվում, նայած զործածության նպատակին: Քարեղեն վորմաշինության համար, առհասարակ մեկ չափ կրի մեջ 2^½ լից մինչև 3 չափ ավագ են խառնվում, իսկ ջուրն ավագի ծավալի 30⁰/օք կամ քիչ ավելի:

Կրի և շաղախի մասին համառոտակի գրածիս նպատակն ե հնարավորություններ տալ բաղդատություններ կատարելու հնում զործածության յեղանակների հետ՝ վորի մասին պետք ե զրեմ ինչ վոր հնարավոր ե, քննել և ուսումնասիրել լեղածը: Քանի վոր դարել են անցել, հին սովորություններն ու կերպերը ծածկել են լերկար ժամանակի թանձր վարագուրով և մանավանդ վոր մեր հին մատենագիրներն այս մասին չունին վոչ մի հիշատակությունն կամ նկարագրություն, առավել ես պիտի կարողանանք ամենահավանական յենթագրություննոր անել, հիմնվելով մեր կատարած փորձերի վրա: Այս մասին ուշադիր ենք յեղել գլխավորապես այն պատճառով, վոր թեև հնագույն շինությունների մեջ շատ կան մեր ժամանակի կառուցողական որենքների համանման լերկությներ, սակայն կան նաև այնպիսի լերկությներ, վորոնք միանդամայն տարրեր են մեր այսորված վորմաշինության սովորություններից ու շինելակերպերից:

Ինչպես տեսնում ենք քննություններից, թեև Արևելքի և Արևմտաքի մեջ չափազանց հին ե կրի զործածությունը, սակայն Հայաստանի մեջ ընդհանրացած յերեւում ե նախքան լերկորդ կամ լերրորդ դարը, յերբ արդեն ընդունված եր տուփ քարի զործածությունը շենքերի համար: Թեև տուփ քարի զործածությունից առաջ, լերբ Հայաստանում ընդհանուր եր բազալտով կամ ուրիշ բաղմատեսակ մնձազանգված վործաքարերով բերդեր, ամրոցներ, նույն իսկ ցեղապետական պլատաններ շինելը առանց շաղախի, սակայն ավելի: հին ժամանակի մնացորդների մեջ լերեւում են վիթխարի

վորձաքարերով, կրաշաղախով շինված մի քանի պատեր, բայց ընդհանրացած չեր անշուշտ ալժմ մեզ անձանոթ զըժվարությունների պատճառով չոռոմ զուղի մոտ նախապատմական մի քաղաքի մնացորդների մեջ, ուր ամբողջ տարածության վրա լերեւում են միմիայն կիկլոպյան ժայռերով միմյանցից բավական հեռու ժամանակով բերդեր, պարիսպներ և բնակության հատուկ շենքերի հիմքեր, առանց բացառության, անշաղախ կառուցված: բայց իրեկ միակ բացառություն այս ավերակների մեջ, կա խոշոր վործաքարերով և կրաշաղախով շինված մի շենքի մնացորդ, վորի պատերից զեռ տեղատեղ մնացել են մինչև մեր բարձրությամբ: Ինչ շենքի մնացորդ ե սա, հայտնի չե, պեղումները միայն կարող են պարզել: Մոտավորապես չորս քառակուսի վերստ տարածություն ունի այս քաղաքատեղին, ուր գտնվում են թե նախապատմական և թե ուրարտական սկզբնական շրջանի շինվածքների մնացորդները: Մեզ հայտնի յեն նաև ուրարտական քաղաքատեղերի այլ մնացորդներ, վորոնց մեջ մեծամեծ քարերի տաշված, կոկված և պատերի մեջ շարված լինելը, ապացուցում են նույն իսկ լերկաթե գործիքների գոլությունը, որով նաև վորոշվում ե այս շենքերը կանգնեցնելու ամենավայրական ժամանակը, վոր հաղիվ մեր թվականից 8—10 դար առաջ լինեն, ինչպես Արմավիրում, Դովլիիում և այլն, և այլն: Սակայն Հոռոմի կրաշաղախով շինված շենքը, վորի քարերը բնավ գործիք չեն տեսած, չեն տաշված կամ կոկված, բնականաբար պիտի լինթաղեր, վոր Ուրարտական շրջանի նախորյակին կամ առ առավել Ուրարտականի սկզբնական շրջանում ե կառուցված: Շենքի հատակագիծը անկանոն վարդաձև ե և նման մի հաստրակական շենքի, հավանորեն կամ աշտարակ ե և կամ մեհենատեղի, բնականորեն այն ժամանակվա համար մեծածախս, վոր հետեւողներ չեն եղել, այսինքն կրաշաղախով շինություններ շեն շարունակվել լերկար ժամանակ, Ուրեմն այս շենքի գոլությունը ապացուցեց ե, վոր Հա-

աստանի մեջ մեր թվականից առնվազն 8-10 դար առաջ՝ կը գործածությունը ծանոթ եր:

Թեև սահմանափակ, այնուամենալնիվ, կամաց-կամաց ընդհանրացել ե, Հայաստանում կրաշաղախի գործածությունը հետագա դարերում, այսինքն մեր թվականի նախորդակին կամ սկզբում, ինչպես ապացուցում են Բաշ-Արարանի մոտ Ղարանլուխ գյուղի վերել մի մեծ շենքի մնացորդը, Դիրաք-լար գյուղի յեկեղեցու ստորին մասերը, Յեղվարդի հին գերեզմանատան կից մի փոքր շինությունը, վորը հետագայում մատուռի յեւ վերածված: Գառնիի Տրդատա ամրոցի թե ամբողջ շրջապատ պարիսպը և թե պարսպից ներս հովանոցի գեղեցկաշն կառուցվածքը, վոր հավանական ե շինված են առաջին դարում մեծազանգված, մաքուր տաշված քարերով, սակայն ընտիր կրաշաղախով շինված լինելուց զատ, սրբատաշ քարերը կապված են միմյանց հետ յերկաթե կապիրով:

Ինչպես յերեսում ե, կրաշաղախի ծանոթությունից քիչ ժամանակ անց, սկսվել ե տուժ քարի գործածությունն իբրև ամենահարմար շինությունը կրի խառնուրդով հաստատուն զանգված կազմելու համար: Իմ կարծիքով, յեթե կրաշաղախի հետ միասին հնում չգործածվեր բացառաբար տռվք քարը, գուցի մենք Հայաստանում չգտնելինք այնքան դաշտավոր կանգուն կամ կիսականգուն հին շինությունները Առաջ կրի, մեծազանգված քարերով կանգնեցրած մեծամեծ շենքերի և հսկայական պարիսպների չափազանց շատ մնացրդներ կան Հայաստանում, սակայն առանց բացառության զբեթե գլակտակների յեն վերածված և հազիվ ստորին մասերն են մնացած, մինչդեռ կրաշաղախով շինված հաղվազգությունը որինակները, վորոնք վորձաքարով են շինված, համեմատարար ավելի յեն պահված, սակայն վոչ այնչափ միակուր զանգվածի փոխված, ինչպես տուփ քարով շինվածները: Մեր թվականի ամրողջ շրջանում տուփով կրաշաղախ վորմանաշնությունը միշտ ընդունված է յեղել վորովհետեւ նախնիք նկատել են, վոր տուփը միակ քարն ե, վոր սերտու

գեն միանում միակտուր զանգված և կազմում կրտշաղախի հետ Բացի այդ, նկատել են նաև, վոր տուփով և կրաշաղախով կազմված բետոնն ավելի հաստատուն և տևական հատկ վթյուն ունի, ուստի պատերը շինելիս յերկու կողմը շարված քարերը, ըստ հնարավորության բարակ կտրած և իբրև պահպանակ շարված են ներսի բետոնի համար, վորին մինչև այսոր հրն անունով պատի ծով են ասում զավառաբարբառով: Իսկ շաղախը բաղադրիլու և իրը ծով պատի մեջ լցնելու համար ունեցել են մեղնից տարրեր կանոններ, վորոնց շնորհիվ թերես վորմանաշնությունն ավելի հաստատուն և ավելի նպատական արմար ե յեղել Ուստի այժմ խոսնք այն շինելակերպի մասին, վոր ցույց ե տալիս հին ժամանակ Հայաստանում կանգնեցրած հուշարձանների քըննությունը:

Առևսարակ, զրեթե ընդհանուր կարծիք ե, թե նախնաց կառուցած շննքերը, վոր խիստ ամուր են և տասնյակ դարերի կանք ունին, իբր թե պատճառն այն ե, վոր կրաշաղախի հետ խառնում ելին զանգված ամրացուցիչ նյութեր, ինչպես մաստաք, ձիի սպիտակուց և այլն և այլն, վորոնք գերազանցորեն նպաստում ելին ամրությանը: Այս համոզման հետևանքով ե, վոր գանազան առասպելներ են ստեղծված հնագույն ժամանակների շաղախի բաղադրության շուրջը, վորոնք բնավլ հիմք չունին և չեն ապացուցվում կատարված քննություններով^{*)}: հետևաբար մնում ե մեզ մատնաշեն շինելակերպի վորոշ տարրերություններ, վորոնք ավելի հավանական են պատերի զիմացկուն և յերկարատեւ լինելու համար:

Բացի յեկրտապական գիտնականների գիտական քննություններից, մեր մատենագիրները ես, վոր համախ սիրում են նոր կանգնեցրած շինությունների մասին գովեսաներ

^{*)} Կրի հետ մաստաք խառնելու սովորության մի ակնարկ յերևում ե մեր հին մատենագրության մեջ, բայց բոլորովին տարբեր նպատակի համար, վոր վորմանաշնության չի վերաբերում. բայց այս մասին կը խոսենք իբր հարմար տեղին:

շառավել, յերբեք չեն հիշատակում վորեն խառնուրդ կրի զանգվածի մոջ, թեև շենքի քարերը մանրամասն վորակում են սրբատաճ, տաճածո, կոփածո, եերածո, խարցյալ և այլ բառերով, սակայն այդ վորակված քարերով պատեր կանգնեցնելու համար յերբ հիշատակում են կիրը, զրեթե միահամուռ բնորոշում են կրաքաղաքի ձուլալ, կրոլ մածուցյալ յեվ ալին. բառերով: Տարակույս չէտ, վոր յեթե ամրացուցիչ վորեն խառնուրդ լիներ կրաշաղախի մեջ, իրեւ գերազուն գովեստի առարկա պետք ե վոր հիշատակվեր մատենագիրները մեկն ու մեկի կողմից:

* * *

Մեր թվականի սկզբից մինչև 7-րդ դարի վերջը մեծ շենությունների պատերն առ հասարակ 0,90 սանտիմից մինչեւ 1,05 սանտ. հաստություն ունեն: Այս հաստության վրա, քարերը յերկու կողմից այնպես չեն շարված, ինչպես այսոր մենք շարում ենք: Ըստ ներկա շինարարական կանոնի, պատերի յերկու յերեսի քարերը դեմ դիմաց այնքան խորություն պիտի ունենան, վոր յերեմն միմյանց հասնելով ծայրը հանգչի հանդիպակաց կողմի ներքեկի քարի ծայրին ու կապ լինի. այս տեսակ կապվածքը քարերի ամեն մի շարքին հատուկ չե, այլ պարբերաբար յուրաքանչյուր կարդի մեջ պատահում են մի քանի հատ միայն, իսկ մյուս քարերն ել յերկու յերեսից այնքան մոտենում են իրար, վոր մեջտեղը, իրեւ պատի ծուծ, շատ աննշան տեղ և մնում: Սակայն հին շենքերի մեջ յերեք չպատահեցի արդ կերպ պատի քարերի դասավորության: Պատի յերկու յերեսին միմյանց վրա շարված քարերը, յերեմն ճակատի ծավալով շատ մեծ են, բայց շատ քիչ խորություն ունեն, վորից պարզ յերեւում ե, վոր յերկու յերեսի վրա շարված քարերն, իրեւ պահպանակ, զետեղվուծ են մեջտեղն լեղած կրաշաղախ հաստ լիցքին, ինչպես ասում են՝ պատի ծուծին, վոր զրեթե պատի հաստության կեսը և հաճախ կեսից ավելին ե կազմում, 0,90 սանտ. պատի հաստությունից, յեթե դուրս գանք միջին

հաշվով 0,40 սանտ.՝ յերկու յերեսի վրա շարված քարերի հաստությունը (յուրաքանչյուր յերեսի վրա շարված քարերի միջին հաստությունը հաշվելով 0,20 սանտ.), կմնա, 50 սանտ. զուտ շաղախը, վոր կուպմի պատի իսկական ծուծը, կամ այժման անունով բետանք, վոր ըստ հին հասկացողության դիմացկուն մասն ե: Ալպես ե դրեթե ամեն տեղ և մենք այս իրողությունը պարզ տեսնում ենք այն կիսավեր շենքերի մեջ, վորոնց մնացորդ պատերը թուզլ են տապահում մեղ հետազոտելու մեջտեղի թուզլ շաղախը: Շատ տեղեր մենք զարմանքով տեսնում ենք, վոր պատի յերկու յերեսի քարերը պոկված ու տարված են, իսկ միջի շաղախի ձուլվածքը մնում ե կանգուն վորոշ բարձրության վրա: Բայց յեթե պատերն ավելի հաստ են քան 0,90 սանտիմը և ունեն մինչեւ 1,05 սանտ. հաստություն, յերեսին շարված քարերի թանձրությունը զրեթե անփոփոխ 20-25 սանտիմ ե (յեթե յերեմն գտնվում են մինչեւ 30-35 սանտ. հաստություն ունեցող քարեր, նմանապես և նույն պատի մեջ կարելի յեւ տեսնել մինչեւ 0,15 սանտ. հաստության քարեր): Ուրեմն հին հասկացողությամբ իսկական պատը կրաշաղախ շինված ծուծն եր, և յերեսները շարված սրբատաշ քարերի պաշտոնը ներքին ծուծը պահպանելն եր, մոտավորապես իբր ծեփի հաստ շերտ*):

Հայաստանում, դարերի ընթացքում հայոց ճարտարապետությունը վերածնվել ե մի քանի անդամ և յուրաքան-

*) Այժմ ամբողջ Յելբոպայում ընդհանրացած ե նմանորենակ մի ոռոգություն աղյուսով կառուցված շենքերի համար: Նախ շենքը կառուցվում են աղյուսով, իսկ հետո 10-12 սանտ. հաստությամբ ողցողով կը քարված փափուկ Մալտայի տուֆի տախտակներով ծածկում են ամբողջ շենքի արտաքին յերեսները: Մալտայի տախտակներն ամրացնում են շենքի վրա բարակ յերկաթե կապերով Յեվ վորովհետեւ տուփը շատ ընդունակ ե անձրեի խոնավությունն իր մեջ ծծելու, այդ պատճառով դեռ անձրե չեկած շտապում են ամբողջ շենքի ճակատը ոծել ձեթով, վորով մը անդամայն աղանովվում ե խոնավությունը: Ջեթով ոծելու այս սովորությունը հայաստանում մըշտ դործածված ե յեղեւ, վորի մասին կիսում իբր տեղը:

Հետո վերածնության մեջ շինարարական փոփոխություններ են քեղիք Պատերի շինության նկատմամբ ևս յեղած փոփոխությունները խիստ ակնբախ են: Գլխավորապես քարերի ծամաչը յենթարկում և փոփոխության, յերբեմն խիստ մեծ քարերը զրվում ենին պատերի արտաքին յերեսների վրա, իսկ ներքին յիթե յերկարությունները փոքր ի շատե կարճ են, այնուամենաւ նիվճարձրությունները հավատը ենին թեարտաքին և թե ներքին յերեսների վրա: Դալիս եժամանակ, յերբ քարերի ծավալը վորոշ չափով փոքրանում է, բայց միշտ պահպում և անփոփոխ, վորմանաշնության այն հերպը, վորի մասին քիչ առաջ գրեցի, այսինքն՝ պատի ծուծը կազմել կրաշաղախ բետոնով, իսկ արտաքին յերեսների վրա շարված քարերը ծառայել են իրեւ բետոնին պահպանակ, այս որենքին հազվագեղ բացառություն և յեղեւ յիրը պատի քարերն արտակարգ մեծություն են ունեցել. բայց այս գեղագում քարերը միմյանց կապել են յերկաթե կապերով. վորի մասին խոսելու յեմ իր հերթին: Նույն իսկ կամարաշինության մեջ ընդհանուր որենքի բացառություն չեն արել. Անիում դեռ գոյություն ունեն կամարաշինության շատ որինակներ, վորոնց մեջ ես գործադրել են նույն կանոնը. 12—15 տասնու. հաստությամբ տուփ քարերը սղոցով կտրված են և նախապես շարված կամարի ստորին մասի վրա իրեւ կաղապար, հետո դրա վրա մեծ թանձրությամբ լցված և բետոնը, վորոնք դեռ մինչև այսոր ել մնում են և պարզ նկատվում կիսափուլ բուրգերի վրա. նախապես շարված բարակ քարերը մշտապես ծառայել են իրեւ պահպանակ. կամ իրեւ հաստատուն ծեփ կրաշաղախ բետոնով կազմված կամարների համար: Այս իրողությունը վորչափ վոր տեսնում ենք գործնականորեն իրադործված կիսափել շենքերի վրա, այնուամենայի ունենք նաև մատենագրական մի թանկագին տեղեկություն, վորից տեսնում ենք, թե ինչ մեծ վատահություն ունեն: Ին ճարտարապետները կրաշաղախ բետոնի պնդության և ամրության վրա: Ստեփանոս Պրբելյանը յերբ պատմում է Տաթերի վանքի մեծ կա-

թողիկեյի շինության մասին (895 թ.), մեջ և բերում նաև մինչ այսոր ևս մեզ զարմանք պատճառող «Տաթերի գագագան» կոչված շարժական, սյունի կամ կոթողի շինության պատմությունը հետևյալ կերպով. «Կանգնել և մերձ իկեղեցոյն, հանդէպ դրանն հարաւոր սիւն մի զարմանալի յանուն սրբոյ երրորդութեան. ի մասն բարանց պատուածեալ ի չափ եւեպւն կանգնոյ»: ուրեմն նկարագիրը պարզ ցույց է տալիս, վոր սյունի ծուծը կազմված և բետոնով, և շաղախի հաստության մասին ճարտարապետի հավատի մեծ լինելը անկասկած և մնում գիտենալով, վոր այդ կանգնած գոգավազանը սյունը վոչ միայն կանգուն պիտի մնա, այլև պետք է շարժվի ամեն կողմի վրա ու չպետք է քանդվի:

Տաթերի սյունը վոչ միայն այս տեսակետով, պայլ և ուրիշ տեսակետներով ել կարոտ և բազմակողմանի քննության, և բարարապետական արվեստի մեջ վորոշ գաղտնիք ներ լուսաբանելու համար:

Խոսք չի կարող լինել, վոր շնորհիվ տուփ քարի կակդության և մաքրության, յերեսները խնամքով տաշմած և կոկված լինելուց զատ, նուև առանձին ուշադրություն և դարձրած միացման տեղերի վրա: Շարված քարերն այնքան սերտ միացած են միմյանց, վոր լիթե ըստ հատկության տուփ քարի զանազան գույները չլինեն, անհնարկուիներ վորոշելի բետարքեր գույնով քարերը միմյանց մոտ գրված են ու կցված: Ծենքեր կան, վորոնց վրա 10—15 դար անցնելուց հետո իսկ, այսոր գրեթե չեն զանազանվում քարերի միացման զծերը, լիթե չլիների տարբերությունները: Հայտնի բան ե, վոր վոչ միայն քարերի բուղութակաց յեղերքները տաշվելուց հետո, սղոց քաշվելով յիրկու քարերի լիզերքները գերազանցորեն ուղղված և միացրած են, այլ նույն սկ քար քարի վրա զպիկելու հորիզոնական մասերը ևս նույն ձևով ուղղված են: Կամարի միա վար սղոցելու միջոցը ծանոթ եր հներին, թեն անշուշտ նախնական ձևով, այնուամենայի վոչ մասության մեջ պատուած քերպեր կն սղոցված և ընդհանուր շարքերի մեջ պատա-



հարար բաց մնացած արանքներում տեղավորված. իսկ յեզիրքներից ներս, թե ուղահայաց և թե հորիզոնական մասերի միացման տեղում 1 կամ $1\frac{1}{2}$ սնտ. ուղիղ հորիզոնական տաշելուց հետո, մնացած մասերը դեպի խորություն այլևս կոնաձև կոպիտ կերպով գարնված ու թափված են, ժամակական մասերը միմյանցից զգալի կերպով հեռացնելով՝ անշուշտ այն դիտավորությունն են հետապնդել, վոր շաղախն առատորեն լցվի յերկու քարի արանքը և մեջտեղի ծուծի հետ միակտուր զանգված կազմի:

Եերեսները ծածկող սրբատաշ քարերը միմյանց վրա դընելուց հետո, միացման գծերը ներսի կողմից նախապես ծածկել են մաքուր և նուրբ կրաշաղախի խավով, վորպեսզի պատի մեծտեղը լցված կրաշաղախի զանգվածից վորեւ կերպ կրաջուր կամ լույծ շաղախ չքամվի դեպի դուրս և չկեղտոտի արտաքին յերեսները։ Այժմ յերբ շաղախը լցնում են պատի շարքի մեջ, վրայից ջուր են ածում, վորպեսզի շաղախը ափելի լուծվի և լցվեն նախապես լցված մանր քարերի խորշերը. սական այս ձևից յերկու տեսակ անտեղություն ե առաջ գալիս. նախ կրաշաղախը հավասար խառնվածքով չի տարածվում ամեն տեղ, վորովհետև ավազը լվացվում է և կրաջուրը գնում մտնում ե առանձին խորշերը. իսկ ավազակույտերը տեղ-տեղ մնում են. յերկրորդը՝ յերեսների վրա շարված քարերի արանքից կրաջուրը քամվում դուրս ե հոսում յերեսնիվար և կեղտոտվում ամբողջ պատը, նախապես ձեռք չառնելով նախազգուշական միջոցներ, ինչպես արել են հին վորմնադիրները։ Ուստի այժմյան պատերի կեղտոտությունը մաքրելու համար, վորմնադիր վարպետները քարով կամ ալ միջոցով քերում են պատի յերեսը, վորով թեև վորոշ չափով մաքրվում ե պատը, բայց պատի սրբատաշ քարերի յերեսից, մասնավորապես միացման տեղերից մի խավ մաշվելով, բացվում և լայնանում են քարերի միացման գծերը և տգեղ տեսք ստանում. իսկ վորպեսզի այս տգեղությունը ծածկվի, վորմնադիրները նույն քա-

բերի փոշին կրի կամ ցեմենտի հետ, շաղախած ծեփում են միացման գծերը, վորով թեև ժամանակավորապես խիստ մաքուր ե յերեսում և անհայտանում են քարերի միացման անշնորհք գծերը. այնուամենայնիվ կարճ ժամանակի ընթացքում թափվում են ալդ ծեփերը և նորից բացվում քարերի արանքները, վորով պատը ընդունակ ե դառնում խոնավություն ներս ծծելու, յեթե շնչքի մակերեսույթը չծեփվի վորոշ հաստության ծեփի շերտով։ Հին վորմնադիրները, հակառակ մեր այժմյան սովորության, պատի յերեսի քարերը շարելուց հետո, անմիջապես լցնում են վորոշ թանձրության շաղախը, հիտո մաքուր լվացված անհավասար մեծությամբ քարի բնկորները մտցնում ելին շաղախի մեջ և քարեր միխում տափակ կողմի վրա, վոչ թե հիմիկվա նման տնկելով սուր կողմի վրա։ Այսպիսով ծուծը կազմող քարերը հավասարապես ոծվում են միենալուն հավասարության խառնուրդի մեջ և խտանում միմիանց կապելով։ Յերբ գալիս հասնում եր լցված շաղախի մակերեսույթին, կրկին լցնում ելին կրաշաղախը, տարածում հավասարապես և նորից մտցնում ելին մանր ու խոշոր քարեր միշտ տափակ դիրքով, վորպեսզի միմյանց կապ լինեն. այս ձևով շարելով ալլևս հարկ չեր լինում ջուր լցնելու, վորպիսզի պատի մեջ շաղախը լուծվի և լցնի ամեն ծակ ու ծուկ։

Ամբողջ 7-րդ դարի տեսողության ընթացքում մեծ շինությունների պատի քարերը տաշելու համար մի ընդհանուր սովորություն կար, վոր հօտագա դարերում չի ընդհանրացել. Քար տաշելու այս յեղանակը բավական գործնական ու նապատակահարմար եր արտաքին յեզերքները կամ միացման գծերն անաղաբատ պահելու տեսակետից. այդ սովորությունը հետեւալն եւ Քարի արտաքին յերեսները ամբողջովին տաշելուց և կոկելուց հետո, 1 կամ $1\frac{1}{2}$ սանտ. լայնությամբ սիստի կողմից յեզերքները տաշում ելին դեպի ներս, այնպես վոր. յերբ քարերը շարում ելին միմյանց վրա, յուրաքանչյուր քարաշարքի միացման տեղում հաճելի տեսքով մի յեռանկյունի հորիզոնական գիծ եր գոյանում շնչքի ամ-

բողջ յերկարությամբ, այսպիսով քարերի մրտաքին լեզերք-
ներն ազդակվեմ եղին հեղիղ միմցանց վրա դրվելուց առաջ
լեկան ճնշումից արաքվելու վտանգից, վորովու տև քարի
նիտը միմյանց վրա հաստանում եր և քարը քարին նստում
եր վոչ թե ուղիղ լեզերքի վրա, այլ 1 կամ 1½ սնտ. ավե-
լի խորից. թե ինչու այս գեղեցիկ սովորությունը հետա-
գալում շեն գործածել, ինձ հայտնի չեն

Հին ժամանակի վորմանաշինության համար քարերի տաշ-
վածքի և չարվածքի մասին փոքր ի շատեւ ծանոթություն
տալուց հետո, մի քանի խոսքես վորմանածութի մասին; վո-
րի շինելակերպը այժմյան մեր սովորականից տարերի լի-
նելուց դատ, մասնավորապես կոչումը՝ տարբեր լինելու մա-
սին վերը. մասնամբ ակնարկեցի: Ըստ հին հասկացողության
իսկական պատը կազմում եր ծուծը կամ քետոնը, և ար-
տաքին ճակատների վրա շարված քարերը ծառայում ելին
իրեն պարզ ոժանդակ կամ պահպանակ ներքին բետոնի
հանատառության համար. Այժմ յերբ քննում ենք հնայարյան
պատերը և հետազոտում նրանց ծուծի խառնուրդը. տեսնում
ենք, վոր անհավասար մեծությամբ քարի բեկորների (խի-
բար). մի խառնուրդ և միացած կրաշաղախի հետ, վորն
ավելի ամուր ե, քան յերեսները շարված քարերը. հետու-
թյամբ կոտրվում և փշրվում են արտաքին յերեսի քարերը,
իսկ ներքին լիցքը, վոր մատավրապես պատի հաստության
կեսից ավելի յե յերեսն, այնքան ամուր ե լինում, վոր
առանց արտաքին ոժանդակ ուժի անհնար ե քանդիլ կամ
փշել. Քարի անհավասար բեկորները միշտ դրված են տա-
գակ կողմի վրա, նախապես շաղախը լցնելուց հետո, վորոնք
միշտ մեկնե կապուա են, մինչդեռ այժմ այդ քարաբե-
կորները (խիբար) վորմանյուն վարպետները շարում են
ցից կամ խիտ կերպով, տնկում սուր կողմի վրա և հետո
վրան թանձր շաղախ լցնում, և վորպեսկի շաղախն անցնի
ներք և հալասար տարածվի, վրան. ջուր են լցնում, ծե-
միակու նորից խառնում, յըեցնում ու տարածում այս ու-
ղան. Կոպմ. բայց այս վերջին ավելացրած ջուրը. ան .

Հավասար ե տարածում շաղախը. շատ անգամ կիրը Նրի հետ
առանձին անցնում ե զանազան խորշեր՝ և պատի արմագին
լեզեսի քարերի արանքից դուրս թափվում, իսկ ավաղակու-
թերը մնում հն յերեսի վրա կամ քիչ ավելի խորշը. ինչ ինչ
լիրաբերում ե քարաբեկորների շարվածքին; բնավ միմիանց
չեն կանգնում. պարզապես շինուած ե յերկու քարի. պատեր
և արանքը լցվում առանց արտաքին յերեսների հետ կա-
պելու. կամ ձուլելու:

Ժամանակի ընթացքում, 14-րդ և 15-րդ դարերում, գու-
յե շինանյութերի խնայողությունը նկատի առնելով՝ պա-
տերի ներքին ծուծն ավելի նիհարացրած են և պատերի
հաստությունն ավելի նվազեցրած: այս զարերում մինչև
օ, 55 սանտ. պատի հաստություններ ենք գտնում. Յերես-
ները շարված քարերը թեն մակերեսները վթով փոքր են, բայց
խորությունները շատ են, կոնաձև թափված, վորոնք վորո-
շափով ընդունակ են լինում ծուծը կազմող շաղախի հետ
չափով ընդունակ են լինում ծուծը կազմող շաղախի հետ
խառնվելու. Այնուամենայնիվ այնքան զիմացկուն. և տես-
ական չեն յեղել այս շենքերը. մեկ կամ մուս կողմից թափ-
ված են յերեսի քարերը և յերեսում են հակառակ կողմից
շարված քարերի ծալցերը վորոշ հաստությամբ ծուծ չինե-
լու պատճառով. բարեբախտաբար այս յեղանակով շինված
շենքերը թե քիչ են և թե առհասարակ շատ փոքր համեմա-
տելով 7-րդ և 10-րդ դարերում շինված շենքերի հետ. Բայց
ինչ վերաբերում և քարերի տաշվածքի և շարվածքի խնամ-
քին ու սաքրությանը, բնավ հետ չեն մնում 7-րդ և 10-րդ
դարերի շինությունների. կատարելությունից:

Ինչպիս վերեւում հայտնեցի, ըստ տեսական փորձերի բա-
տառված ե, վոր վորմանայուն վարպետները շարում են
կամի խառնուրդ ավաղի ամենահարմարը գետի. մաքուր
ավաղն ե, վորովհետեւ կրաշաղախի զանգման համար պա-
հանջնում ե, վոր ավաղը միանգամայն ազատ լինի բուսա-
կան և հողաբան գոյացությունից. ուստի գետի ավաղն ե
միայն, վոր մշտապես ջրի հոսանքի հետ քարելով և վագվե-
լով ունի այս հատկությունը. Հայտնի յե վոր ավաղը գոյա-

Նում ե քարի փշրանքներից գետերն իրենց հսսանքի ճանապարհն քերելով սարերի ստորոտներն ու ժայռերը գոյացնում են ավազը և տանում, շտեմարանում են զանազան հարթավայրերում, ուր ջրի գոսանքը համեմատաբար սեղմ ե. գետերի մեջ ավազի տեղափոխումը և շտեմարանումը կատարվում է հաճախ մեծամեծ վողողութերի ժամանակ. Գետի ավազն ընդհանրապես գոյանում է բազալտի, զրանիտի և այլ կարծի վորձաքարերի փշրանքներից, վորը անփայլ սև գույն ունի և անհարթ մակերեսութ. ավազես վոր, յեթե մեկը մի բուռ ավազ սեղմի ափի մեջ, դգալի կլինի հատիկների անհարթությունից և մաքրությունից առաջ լեկած մի խշշուն. տուփ քարից գրեթե ավազ չի գոյանում, նրա փշրանքները լերկար մնալով ջրի մեջ, գրեթե ցնիխի լեն փոխարկվում, ահա այս հատկություններն են, վորոնք ճանաչել են տալիս ավազի լավությունը և շինարարության մեջ գործածելու հարմարությունը:

Անվրեալ ե, վոր նախնիք սովորաբար դործ են ածել գետի ավազ և հնարյեղածի չափ գուշացել ցամաքային ավազներից, վորոնք գտնվում են զանազան վայրերում. հողաշերտերի տակ ծածկված, չին շաղախների քննությունը պարզ ցույց է տալիս, վոր սև ավազ և խառնված շաղախին և ավազի հատիկները պինդ ոծված են կրով. յեթե ավազը մաքուր չլիներ, նրա հատիկները հեղտությամբ դուրս կզալին կարծրացած շաղախի միջից իր իսկական քարի գույնով առանց կրի պինդ ոծվածքի: Յեթե հարկը ստրաել ե ցամաքային ավազ գործածել, անպայման նախապես խիստ մաքուր լվացել են և հետո միայն խառնել կրին: Ավազ լվանալու այս հին սովորությունը դեռ պահպած է արևելյան շատ լերկներում: Մի մեծածավալ տաշտի մեջ՝ վորի շրջապատը 60—70 սնտ. բարձրություն ունի, կիսով չափ ավազ են լցնում և վրան ջուր մինչև տաշտի բերանը. սկսում են անդադար բահերով խառնել և շարունակ ջուր ավելացնել, վորով պղտորված և ցեխոտ ջուրը յեղերքից միշտ դուրս է թափվում իր հետ

տանելով բոլոր հողալին և այլ բաղադրությունների մասերը. այս գործողությունն այնքան են շարունակում, մինչև վոր տաշտի ջուրը պարզվում է. այնուհետև ավազը հանում են տաշտի միջից: կիտում մի առանձին տեղ, և նորը լցնում տաշտի մեջ լվացման գործողությունը շարունակելու համար: Զարմանալի կերպով նկատված է, վոր հին հուշարձանները շինված են առհասարակ այնպիսի տեղերում, վորոնց անմիջապես մոտ գտնվում են գետեր կամ վտակներ. հետեւ բար դժվար չեր նրանց համար միշտ գետի ավազ ունենալ, քանի վոր մաքուր ավազի հանքերն այնքան մոտ եյին գրտնը վում: Ավազների մեջ լերբեմն պատահում են սպիտակ փալուն կալծաքարի և ոպսիդի հատիկներ. թեև ալսորինակ ավազները խոտելի չեն, այնուամենայնիվ սա ընդհանուր յերեսութ չե: Բացառապես Յերերութի մեծ հուշարձանի կառուցման ժամանակ շաղախի մեջ խառնված ե միմիալին պեմզայի ավազ: Այս մեծ հուշարձանը գրեթե անաղարտ հասել է մինչև մեր որերը (բացի մարդկային բարբարոս ձեռքերով հատկապես քանդված մի քանի մասերից), սակայն դժբախտաբար առիթ չի լեղել շաղախը մանրամասն քննելու և տարրալուծելու: Այս պեմզայի ավազով պատրաստված շաղախը գրեթե առաջինն ու վերջինն ե մեր ուսումնասիրած հուշարձանների մեջ:

Մի բացառիկ լերեսութ կա շաղախի տեսակետից: Արագածի լանջում գտնվող Ավան գյուղում, այնտեղ կա 5-րդ դարի մի շենք, վորի շաղախը փոխանակ սպիտակ գույն ունենալու, մոխրագույն կամ դրշագույն ե, ճիշտ այն գույն ունվ, ինչ ալժմյան ցեմենտի գույնն ե: Զափազանց կասկածելի յե, վոր ալդ շենքի շաղախը սովորական կրով գանգված լինի, անպայման կամ կրի հետ մի ուրիշ նյութ ե խառնված, կամ առանց կրի, բացառապես կրի տեղը բռնող մի այլ նյութով ե զանգված. ցագալի յե ասել, վոր դժբախտ հանգամանքների պատճառով, մինչև այսոր մեզ անհասկանալի մնաց ալդ շաղախի բաղադրությունը: Ամրության և տոկունության մասին լինել չի կարող, վորովհետեւ

վրալից անցել ե 15 դար և մեզ հասել ե մեծ մասամբ ան-
ֆաս, իսկ արևմտյան կողմի վրա, ուր մարդիկ քանդել ու
տարել են ստորին մասի քարերը, վերել զրեթե 2—3 մետր
տեղ հորիզոնական կերպով կախ ե մնացել ողի մեջ, առանց
մի տեղից ճեղքվածք կամ պատռվածք ունենալու:

Ճենքի պատերի համար, հուռմ կրի հետ ավագի խառ-
նուրդը կրի ծավալի 2¹/₂-ից ավելի չե, միայն Զվարթնացի
մուլթերից մեկի մեջ յերեսում ե մի շերտ, վորի մեջ թերես
ավելի քան յերեք չափ ավագ ե խառնված: Սակայն մի ու-
շակրավ յերեսութ կա հայկական շաղախի մեջ, վոր արժե
ուսումնասիրել, Քարուիր մեծ շենքերի մեջ, մաքուր ավա-
զից պատրաստված շաղախի հետ կամավորապես խառնված
ե յերեսում սիսերի, կաղինի, ընկույզի մեծությամբ մանր
խիճեր, անշուշտ նկատել ելին, վոր այս ձեի խառնուրդով
պատի ծուծն ավելի ամուր ե ծուլվում քարի անհավասար
մեծությամբ բերուների հետ, սակայն հայտնի չե, թե այս
քարի մայր փշրանքները կրաշղախի հետ են խառնած,
թե հետո քարաբեկորների հետ միասին տեղավորած ծուծի մեջ:

Այժմ մնում ե իմանալ, թե ինչպես են վառել կրաքարը
և ինչ ձեռվ են պատրաստել կիրը: Կրաքարը վառելու կեր-
պի մասին կարծիք հայտնել, ըստ իս, ավելորդ ե, վորով-
հետև նախ մեղ անծանոթ ե նրանց կիր վառելու կանոնը,
յերկրորդ, ընական ե, վոր Հայաստանը բացառություն չպի-
տի կաղմեր հարեւան քաղաքակիրթ ազգերի մեջ, վորոնց
կրաքար այրելու վառարանների մասին տեղիկություններ
կան նույն իսկ նախաքրիստոնեական շրջաններում, ինչ-
պես ֆրանսիացի վիտնականի 1822 թվին տեսած Յետուրա-
կան կրի վառարանը, վորի նկար սգրությանը նաև լուսական վո-
շինչով չի տարբերվում մեր այժմյան վառարաններից: Սա-
կայն կարելի է վ ըոշ կարծիք հայտնել վառարանից դուրս
յեկած կիրը մարելու և շաղախը պատրաստելու նախապատ-
րաստական աշխատանքների մասին, հիմնվելով թե վաղեմի
ավանդական սովորությունների շարունակության և թե
քարերախտ դիպվածով գտնված ապացուցների վրա, վորոնք

թեև մի քիչ ուշ ժամանակի (11-րդ, 12-րդ դար), այնուա-
նենայնիվ անպայման նախորդների սովորության շարու-
նակությունն ելին: Ինչպես վերը տեսնվեց, մասամբ ցույց
տվի յելքոպական և ասիական յերկրներում կրաշղախը
պատրաստելու և պատի մեջ լցնելու ձեւերը: Անկասկած եր-
կոր Հայաստանում կրաշղախը պատրաստելու վերոհիշալ
յերկու ձեւն ե գործադրված: 1) հալում տաշտի մեջ և քա-
մում հորում, 2) ջրաօսկեմամբ մարում և փոշիացում: Տաշ-
տի մեջ հալված ու քամված կիրը նախնիք գործ են ածել
միայն ծեփի համար: Յերկար քննելով 13-րդ դարուց սկսած
մնացորդ ծեփերը, վորոնց բաղադրությունը վոչ միայն նուրբ
ավագով և համեմտարբար առատ կրով ե, այլև մեջերը վոչ
մի պատթում կամ ուռչում տեղի չի ունեցել, վորն ապացույց
ե կրի քամված և յերկար ժամանակ հորի մեջ պահված լի-
նելուն: Կրաքարը տաշտի մեջ հալեցնելով հատկապես բաց-
ված հորի մեջ հավաքելն իր կարենը ողուտներն ունի: Կրա-
քարի մեջ գոնվում են յերեմն տարբեր տեսակի քարի
ավագներ, վորոնք թեև ալուված և կրի յեն փոխվում, սա-
կայն ջրի տակ շատ ուշ են բացվում և փոշիանում, ուստի
յերբ հորի մեջ լցվում հալվում և գոյացած կրախիուսը, հո-
րի խոնավության մեջ, մի քանի որքա ընթացքում բաց-
վում և փոշիանում են այց ավագահատիկները և կրախիուս
զանալով խառնվում են հորի մի ջի քամվածքի հետ: Պա-
տահել ե, վոր գործի շտապողական լինելու պատճառով, ծե-
փի հատուկ կիրը հալեցը են սրսկելով կամ այլ յերանա-
նակով, առանց տաշտի մեջ հալելու և հորի մեջ չածկված
պահելու, անմիջապես ծեփել են պատը, սակայն քիչ ժա-
մանակից հետո ծեփի վրա յերեցը են այտուցներ կամ
փոքրիկ պայթումներ, տեղի տալով նոր բացված հատիկնե-
րի ծավալի ընդարձակման ուժին:

Վոյ միայն ծեփի, այլև պատերի մեջ անգամ, հաճախ
նկատելի յե, վոր վորմաշինության համար շտապով մարեց-
րած կրի միջից յեղած քարերը (անշուշտ հասարակ քար
կարելով) խառնված են ծուծին և լցրած պատի մեջ, սա-

կայն ժամանակ անց ալդ կարծեցլաւ քարերը բացվելով և կրի փոխվելով այնպես են ընդարձակել ծավալը, վոր վրան դրված ծանր քարերը շարժել են տեղից և դուրս քշել պատից: Այս անտեղությունները չեն նկատվում հնագույն պատերի մեջ:

Կիրը սրոկելով մարելու սովորությունն ընդհանրացած և թերեւ զբուրության և ժամանակի խնայողության համար Յերը ջրասրսկմամբ կիրը մարում և փոշին կիտում են մի տեղ, նրա մեջ պահված խոնավության պատճառով շարունակվում են բացվել տարբեր խմորից յեղող ավաղահատիկները, իսկ յերը կազմում են կրաշաղախի կալը, կալի մեջ ավազի շերտի խոնավության պատճառով մացորդ բոլոր ավաղահատիկները բացվում են 2—3 որվա ընթացքում վորոնք նախնական գործողությունների ժամանակ գեռնես չելին բացվելը Կալ բառը թերեւ անսովոր և այս մեր շրջանի մարդկանց համար, բայց շատ սովորական և վաղեմի Հայաստանից գաղթած և փոքր Ասիայում ու Սև ծովի ափերի մոտ բնակություն հաստատած հայերի մեջ: Այս բառը սերունդից սերունդ յեկել հասել և մեր որերը և այն կողմերի բնակիչներից ում վոր ասէք քիրածի կամ կոի կալ, անմիջապես կհասկանան համեմատական չափով իրար խառնած կոի ու ավազի մեծ կույտը: Կալ կազմելու այս գործողությունից յերկու տեսակ ոգուտ և առաջ գալիս, նախ՝ ավազի խոնավ շերտերի տակ բացվում են բոլոր մացորդ կրացած և տակավին չբացված ավաղահատիկները, յերկորդ՝ լուրաքանչյուր կրաշերտ ծածկվելով ավազի թանձր խավի տակ միանագամայն ազատ և մնում ողի աղղեցությունից և յերկար ժամանակ պահում եր կատարյալ ուժը:

Երի կալը մի ուրիշ ոգտակարություն ևս ունի աշխատանքի տեսակետից, բանվորը կույտի մի կողմից մաս առ մաս վերցնում է խառնուրդը, և ջրով զանգելով տուլիս վորմանդիր վարպետին, մըուս կողմից նորն և բերում զանգելու:

Ասիում, մինչև Գագիկի կանգնեցրած բոլորակ յեկեղեցու պեղումները, անհալտ եր, թե անցիք ինչպես են պատրաս-

տել կրաշաղախի զանգվածը: Բարեբախտարար, պեղումների ժամանակ դուրս յեկավ մի մեծ քարեղեն տաշտ, վորի մեջ պատրաստել եյին կրաշաղախը, շենքը վտանգվելուց հետո, յերբ կառուցել եյին մի շրջակամար 1013 թ. կործանվելուց ազատելու համար: Աբկղի ստորին մի անկունում մնացել եր մի կտոր չզանգված ավաղով խառն կրի փոշի, սա արդեն ցույց եր տալիս, վոր կիրը ջրասրսկմամբ մարել են և ավազը խառնելուց հետո լցրել տաշտը զանգելու համար:

Կրաշաղախի ծեփը, վորը ծածկում և պատի արտաքին յերեսի վրա ամեն մի տպեղություն և արհեստի պակասություն, Հայաստանի մեծ հիշատակարանների մեջ բնավ չեն գործածել, միայն մասնավոր տների մեջ գործածական եր, այն ել 12-րդ և 13-րդ դարերից սկսած, այս դարերի յեկեղեցիների մի քանիսի մեջ ևս յերեսում են պատի ընտիր ծեփե, վորոնց վրա պետք եր վոր նկարեյին զանազան կրանական պատկերներ, իսկ յերը կանխորոշած չեր նկարազարդել, յերբեք չեն ծեփված: Կաթողիկեյի հյուսիսարևմտյան կողմն անակնակալ մի սենյակ բացվեց, վորի պատերն առանց ծեփի այնպես մաքուր և գեղեցիկ քարերով շինված եյին, վոր վոչ մի ծեփով չեր կարելի փոխարինել այդ մասը բությունն ու վայելչությունը: Կաթողիկեյի, Ապուղամբենցի, Փրկչի մեջ ծեփեր կան, վորոնց վրա նկարազարդված հետո սակայն փաստեր շատ կան, վոր այդ ծեփերը 13-րդ դարուց առաջ չեն: Զգարթնոցի զմբիթակիր սյուների վրա յերեսացին ծեփեր ավելի նախնական, քան Ասիի մեջ յերեցածները, հավանորին 9—10-րդ դարու, բայց և այնպիս քննությունից յերեսում ե, վոր ընդհանրապես պատերը ծեփված չեն և ծեփի փոխարեն վորոշ տեղեր պատերը ներկված են, ինչպես արծվախոյակները: Թե ինչ բաղադրություններ ունին ալդ ներկերը, վոր 7-րդ դարուց մինչեւ այսօր հետքերը չեն կորել, կարոտ են հատուկ մասնագիտական քըննության:

* * *

Աղյուսի գործածությունը Հայաստանում շատ հազվադեպ է հին դարերին. պատմագիրները հատ ու կոռու հիշատակություններ ունին 5—7-րդ դարերում կանգնեցրած աղյուսաշեն շինքերի մասին. բայց ինչպես յերկում և այդ դարերի աղյուսաշեն շինքերը կամ բոլորովին կործանվելով կամ վերանորոգությամբ փոխվելով, այսոր մեզ չեն հասել, ինչպես Վարդան Բգեշիսի Դիվինի մեջ շինած աղյուսաշեն չեկեղին, վոր հետո վերաշինվեց քարությունը. Ու այժմ կանգուն կան Սրվեղի և Կերանց վանքերը, վորոնց շիներութվականները անհայտ են, սակայն, դատելով այդ շենքերի ճարտարապետական վոճերից, 11-րդ դարից այն կողմը չեն անցնում. Միայն Ասիրի մեջնաբերդի մեջ շինված պատմի ջրամբարն ե, վոր կարելի լին մինչև 7-րդ դարը տասել, յեթե վոչ ավելի կանուխ: Նկատի ունենալով արվեստի աստիճանական զարգացման որենքները, անվրեպ կերպով պիտի հետեցնենք, վոր թեև տուփ քարի գործածությունն ընդհանրացած եր գեռ առաջին դարից, սակայն զրւգընթացար աղյուսն ել գործածության մեջ եր, տոփի բազմակողմանի մշակմանը գեռ լիովին ծանոթ չլինելու պատճառով: Վոր հնում աղյուսը կատարելապես ձուլել և թրծել պիտելին, վկայում են մինչ այժմ գեռ կանգուն հնագույն շենքերի վրա ծածկված կղմինտըները, ինչպես Մրեն, Աշտարակ, Բագարան, Տիկոր, Զվարթնոց և այլն, վորոնք վոչ միայն չափազանց լավ լիփած են, այլև ձեռվ այնքան լավ մշակված, վոր մի կաթիլ ջուր չեն անցկացնում իրենց ներքեւ:

Ասիրի ջրամբարների աղյուսները վորոշ չափով մեզ ցուց են տալիս, վոր հայերը աղյուսաշինության արհեստը փոխ են առել արենիքից, վորով ետև հավասարակողմ քառակուսի աղյուսները, ինչպես Արի ջրամբարի վրա գործածվածներն են, շատ վաղ ծագում ունեցան Արենիքում, իսկ Սասանական ըրջանում ընդհանրացած շինություն եր Պարսկաստա-

նում: Մինչև 7-րդ դարու վերջին կանգնեցրած և մեզ հասած շենքերի տանիքների վրա, առանց բացառության կըդ մինուր վ են ծածկված: Յեթե նույն խակ այդ դարերին կառուցված շենքերի վրա այժմ քարով ծածկված տեսնենք, անպայման պետք և 10-րդ դարից հետո յեղած հիմնական նորոգության արդյունքում համարենք, վորովինեակ, ինքս անձասը քննել եմ Տիկորի, Բագարանի և այլ լեկեղեցիների կտուրները, վոր նց այժմյան քարե ծածքի տակ զեռ մնում են կրաշաղախի մեջ խրված ամբողջական կամ ըեկոր կըդմինարները: 10-րդ դարի ճարտարապետական մի նոր վերածանության շրջանին ե, վոր հաւ ճարտարապետներն ոգտավելով տուփ քարի հատկություններից, կղմինտը փոխարինել են տուփ քարի բարակ տախտակներով, վորոնց մեծ մասը սղոցով կտրված են պահանջված չափով, կղմինտը փոխար են պատրաստված քարե տախտակները միմյանց մոտ շարելու համար շատ ճարպիկ ձեռվ տաշշելուց և պատշաճ տեսք տալուց բացի, վորպեսզի ջուր չանցնի ներքեւ, բավականին նմանություն ունի կղմինտը շարլածին: Բայց հայտնի լի, վոր հնագարյան ճարտարապետը չի զոհացել կղմինտը քարով փոխարինելու գլոււտով և վորպեսզի ջուր չքամվի արանքներից, նրա տաշվածքի հատուկ ձեռշակելով, այլ նկատի ունենալով առհասուրակ տոփ քարի ջուր ծծելու ընդունակությունը, մտածել են այդ հատկությունը չեղորացնելու վրա, ուստի տանիքի քարերն ամբողջովին շարելուց հետո առաջ ձեթով ոծել ե ամրող տանիքը, վորով ծածկված քարերը միանգամայն անընդունակ են դարձել ջուր կամ խոնավություն ծծելու: Ձեթով ոծելու սովորությունը միմիայն տանիքների համար չի գործազրվել հասարակական մեծածախս քարուկիր շինքերի ամբողջ արտաքին յերեսները ոծված են ձեթով: Բազրատունքաց պատմի մեջ հետնագույն շինված սի մաս կա, վորի վրա տաշկագիր լիքեռում են ձեթով ոծված լինելու թարճ հետքերը:

Յերեկի ինչպես Հայաստանը, ուունպատ յելքուպական Մալտակի տուփը գերազանց անգամ աղյուսական ընդհանրացած շինություն եր Պարսկաստա-

Ցնույն նախնական աղբյուրն ունին Յելրոպական ճարտարապետաները, վոր ընդհանրապես աղյուսաշեն մեծ շենքեր են կառուցում, պատերն ամրողովին շինելուց հետո, ամբողջ շենքի արտաքին յերեսները փոխանակ ծեփի ծածկում են 10—12 սնտ. հաստությամբ սղցով կտրված Մալտայի տուֆի տպիտակներով և անմիջապես հետո, վորպեսզի խոնավություն չծծի, յեփած ձեթով լավ ոծում են ամրող շենքի ճակատները, նույն իսկ յերեմն ձեթը քսելուց հետո լուղաներկով ներկում, վորով յերկար ժամանակ անջնապահում են շենքի ճակատները ծածկած քարերը:

* * *

Յերկու զանազան ազբյուրներից մեզ ծանոթ ե, վոր 5-րդ և 6-րդ դարերում հասարակական մեծ շենքերի տանիքները ծածկված եյին փայտով, նախ շատ կան մատենագրական հիշատակություններ և յերկրորդ 5—7-րդ դարերի հատկանիշը ունեցող շենքերը, վորոնք հասել են մինչև մեր որերը, կամարածածկ լինելու վոչ մի հետք չունեն, ուրեմն անկառակած ե, վոր նըանք փայտով են ծածկված յեղել Յեթե նույն իսկ գտնվեն հիշյալ դարաշրջանների շինված շենքեր, վորոնք կամարածածկ են, հետազա վերանորոգության արդյունքիտի համարել:

Պատմագիրները շատ ունին մեծամեծ յեկեղեցիները հըրդեհելու և փայտաշեն տանիքներ այրելու մասին տեղեկություններ, տեղեկություններ նաև փայտածածկը վերացնելով քարաշեն տանիք շինելու որինակները: Սակայն բազմաթիվ փաստերով գիտենք, վոր 7-րդ դարում, ինչպես զմբեթաշինության, այնպես ել կամարաշինության արվեստը գերազույն կատարելության եյին հասցըել Հայաստանի ճարտարապետները և այս դարաշրջանից սկսած մեզ հասած հըսկայական շենքերի տանիքները ծածկված եյին քարե կամարներով: Սակայն անհուտական մեծ ու փոքր շինությունների և պետական զանազան սլաշտոնական համար, որենքը նույնը չեր մինչև հայարվեստի վերջին անկումը՝ 14—15-րդ

դարերում: Պեղումները և բազմատեսակ հետազոտությունները ապացուցներ են տալիս առավելապես հոգու հոգով կամ քարով ծածկված հորիզոնական յերդիկների: Վոչ միայն անհատական փոքր ու միջակ տների, այլ և իշխանական ապարանքների, պետական զինվորական զանազան հաստատությունների մնացորդների վրա կամարածածկի կամ յերկողողմաթեք տանիքի վոչ մի հետք չի յերկացած ավերակների մեջ. կասկած չկա, վոր այդ բոլոր շենքերը, մեծ մասամբ, ծածկված եյին փայտով և հողածածկ հորիզոնական յերդիկներով: Սկսած 11-րդ դարից, ապացույցներ շատ ունինք, վոր ժամանակակից ճարտարապետները շատ լավ գիտեյին պարզ կրաշաղախ բետոնով վերնահարկի հորիզոնական յերդիկներ շինելը, վորոնցից մի քանիսը հասել են մեզ, ինչպես յեկեղեցական ընդարձակ գավիթներ, տապանատներ ու գամբարաններ, բայց հասարակաց ապարանքների, ժողովը դական մեծ ու փոքր տների վերնահարկը քարածածկ բետոն լինելու մասին տակապին ապացույցներ չունենք. ուստի համոզված ենք, վոր բոլորը վերջացրած են հողածածկ յերդիկներով: Բազմահարկ շենքերի մասին հաստատապես զիտենք, վոր յուրաքանչյուր հարկաբաժին զատկած եր հորիզոնական ճգլած գերաններով, վորոնք բնականարար ծածկված են որի պատմական տախտակամածով:

Այստեղ փակագծի մեջ, գուցե ավելորդ չի լինի մատնանշել հարկաբաժինների կառուցման մի հին սովորություն վորին ականատես եմ յեղել թե իմ հալունի յերկրում և թե բոլգարիայում. Թե իմ հայրենակիցների և թե բոլգարահայոց նախնիքը լինելով Հայաստանի հնագույն գաղթականները, թերեւս իրենց հետ միասին ըերել են վաղեմի շինարական մի սովորություն և շարունակում են մինչև մեր որերը, հին ձեռվ շինված տների մեջ:

Հարկաբաժնի հաստ գերանները բավականին խիտ շարելուց հետո, վրան փոռած եյին բարակ ճուղերի և փշալից խառնուրդի (այս խառնուրդին կամ խորիշին «աղետ» անունն են տալիս) մի շերտ, 15—20 սանտ. հաստությամբ, այս

շերտի հաստության կեսից ավելին իջնում եր հորիզոնական ձգված գերաններից կեսից ավելի ցած, իսկ գերաններից վերև փռում եյին այնքան խիտ, վոր զբեթե տակի գերանները հազիվ հազ եյին յերեսում: Այս գործողությունը վերջացնելուց հետո, վրան այնքան առատ ցիս եյին լցնում, վոր վոչ միայն ոռվում եր այբողջ խոխի կամ ազետի շերտը, այլև վել եկց բարձրանում եր մինչև, 7—10 սնա հաստությամբ. այս խոխացին շերտն ըստ բավականի չուանալուց հետո, թե ներքեց և թե վերև ց կրկին ծեփ և մեյին 4, 5 սանտ. հաստությամբ դարձանով կամ քակորով խառնված ցեխի ծեփի մի նոր շերտով և կոկում: Այս գործողությամբ կազմվում եր բավական հաստատուն զետին և դո, ծածկում առանց տախտակամածի, Յեթե ժամանակի ընթացքում ամենից վերի ծեփի շերտը բարակեր, մաշվեր ավելիով կամ փորվելով, կրկին անզամ ծեփը նորոգում ելին քակորախառն ծեփով. գույնին հաճոցատեսիլ յերեսութ տալու համար, ծեփի շաղախին վորոշ քանակությամբ սուրս եյին խառնում (մի տեսակ կարմիր հող). Պատահել եմ նաև մենյակների, վորոնց հատակի ծեփի վերին շերտը փոխանակ ցեխով ծեփելու, կրաշաղախով են ծնիված:

Ենքերի մնացորդներ կան, վորոնց հարկարաժինների համար հորիզոնական ձգված գերանների հաստության չափերը վորոշ են, տեղում մնացած նշաններով, կանգուն պատերի վրա գերանների ծայրերը անցուցրած քառակուսի ծակերը կարգով մնում են մինչև այժմ: Այս մասին շառորինակներ կան, սակայն այդ որինակներից մեկը կարելի յե հիշել, վոր շատեն անձամբ տեսել են: Անիում, Մաղկոցաձորի բարձունքի վրա կա մի բազմահարկ մեջ շինություն վորի միայն ստորին մասն ե կամարածածկ, իսկ վերի հարկերը բոլորն ել փայտահարկ են շինված բացի արտաքին պատենց: Արտաքին պատերի վրա գեռ մնում են հարկաբաժնի հատակի համար գերաններ մտցնելու ծակերը կարգով, վորոնց գորությամբ վոչ միայն կարելի յե ճշտիվ չափել յուրաքանչյուր հարկի բարձրությունը, այլև կարելի յե

վորոշել յուրաքանչյուր սենյակի քառակուսի չափերը: Գերանների ծակերը մոտավորապես 18—22 սնտ. հաստություննեն, իսկ թե այս գերանների վրա ինչ հաստությամբ տախիսակամած եր շինված, կայ թե ներքեւից առաստաղ ուներթե վոչ, հայտնի չե: Սակայն չենք սխալի, ինթե յենթադրենք, վոր գերանները շարված եյին մաքուր սրբատաշ, ներքեւից առանց առաստաղի. գերանները յերեսում եյին կամ բաղրովին մաքուր և կամ ժամանակի վոճերով: զանազան ծաղկանարներ փորագրված: Այսպես յենթադրելու հիմքը և ծառայում թե նմանորինակ սովորությունը, վոր հասել են մինչև մեր օրերը և թե Անիի ժամանակակից գտնված առաստաղի գերանները, վորոնք առանց տախտակով ծածկած լինելու, քանդակագործեր են զեղեցիկ մանվածոներով: Այս քանդակաղարդ գերանները, պրոֆ. Մարի պեղումների ժամանակ գտնվեցին Անիում, միջնաբերդի պալատի ստորին մասերում հասարակաց հատուկ բնակարանների ավերակների մեջ: Գերանների վրայի քանդակաղարդության վոճը ցուց ե տալիս, վոր անվրեակ պատկանում են Բագրատունի թագավորաց շրջանին. ումենայն հավանականությամբ, մի հիմնական նորոգության ժամանակակի վոր տեղի յե ունեցել թե հունական և թե թաթարական ալիրապետության շրջանում, այս գերանները հանել և պահատի ստորոտի մասի շինությունների մեջ իբրև պահանգ են գործածել, անշուշտ տեղը նորը զարդարանդակելով կամ նոր վոճով առաստաղներ շինելով: Այս զարդարանդակ գերանները սինչ տաճկական արշավանդը և գրավումը պահված ելին Անիի թանգարանում, իսկ թե այնուհետև ինչ յեղան, ինձ հայտնի չե: Անիի թագրատունիների պալատի պեղումների ժամանակ հայտնվեցին, առաստաղների տեսակետից, ճարտարագետական նորություններ: 12—13-րդ դարաշրջաններին արդու անվիճելի յեղան տախտակամած առաստաղները, ինչպես նաև այդ առաստաղների վրա ձուլած գաճով ու գունավոր ծաղկանարներով զարդարելու: Պալատի հյուսիսի արևելյան առաջակարներով մեծ զանյինի մեջ գտնվեցին գաճից ձուլված և անվունի մեծ զանյինի մեջ գտնվեցին գաճից ձուլված:

զրաները զարդաքանդակված նեղ յերիզներ, վորով հյուս-
 ված երին սանվածոները, հյուսվածքից գոյացել ելին բազ-
 մանկյոնի խոր բացվածքներ, վորոնց մեջ գետեղված ելին
 նույնպես զամից ձուլված զարդածեր. Այս գաճի զարդա-
 րանքները ամրացած ելին բարակ տախտակով ծածկված
 առաստաղի վրա. Այս սրահում մի ծալրն անջատված մի
 պունազարդ սրահ կար, վորի սըուներն իրենց խոյակներով
 քարից ելին՝ հուսական վոճով, իսկ սըուներից վերև յեղող
 կամ ըները մինչեւ առաստաղ փայտից ելին շինված, վորոնց
 վրա հիանալի կերպով փորագրված ելին տերեներ, ծաղիկ-
 ներ ու թուչուներ, չգիտեմ ինչ զիսպածով այս քանդակա-
 զարդ փայտա կամ ըներից մեկի վրա ալրվածի նշաններ
 կոյին, սակայն ընդհանուր առմամբ անմնաս ելին մնացած
 բոլոր յերեք կամարները. Պալատը յերկու մասի յեր բաժան-
 ված հյուսիսից հարավ մի յերկու միջանցքով, անշուշտ այս
 միջանցքի հարավ-ընմտյան կողմը զուտ ընտանեկան բա-
 ժինն եր, զանազան մեծ ու փոքր սենյակների բաժանում-
 ներով: Այս սենյակների հարավային կողմը շինված եր մեծ
 ջրամբարը, վորի մասին առիթ ունեցա մի փոքր ծանոթու-
 թյուն տալու. Այս ջրամբարի վրա յեղել և մի մեծ սենյակ,
 վորի առաստաղը վոչ միայն բարակ սրբատաշ տախտակնե-
 րով եր ծածկված, այլև ամբողջովին գունակեղ նկարազարդ-
 ված. զժրախտաբար մեծ մասամբ այս նկարազարդ առաս-
 տաղի բեկորները փտել են փատակների տակ, միայն մե-
 քանի փոքրիկ կտորներ գտնվեցին ներւված և վրան գեղե-
 ղեցիկ տերեներ ու ծաղիկներ նկարված, այս կտորներն ել
 պահված ելին Անիի թանգարանում, իսկ այժմ չգիտնմ թե
 ինչ յեղան: Ինչպես յերեսում և այս սենյակը հատուկ եր ըն-
 տանեկան կամ ավելի ճիշտ, հարսանիկան խրախճանքի,
 վորի մի կողմի վրա զատկած եր հարսանեկան առագաստի
 սենյակը, այս հարակից սենյակի ճակատը ծածկում եր մի-
 այն վարագույրով, վորի համար հաճախ վարագույրները
 բերում ելին յեկեղեցիներից և ծածկում. այս մասին այն
 ժամանակա յեկեղեցական ժողովներում նույն իսկ որենքներ

կան զրված, վոր արգելվեն յիկեղեցիների վարագույրները
 հարսանիքներին վարձու տալու սովորությունը: Հայ մատե-
 նազրերի մեջ շատ և հիշվում հարսանեկան առագաստի մա-
 սին, սակայն վոչ մի տեղ մանրամասն նկարագիրը չի տըլ-
 ված: Անիի ընտանեկան բաժնի ամենից մեծ սրահին կից
 այս սենյակը յեկավ մեզ բացատրելու նրա ձեն ու նկարա-
 գիրը: Այս սենյակը յերեք կողմից ունի կանոնավոր ու հաս-
 ատուն պատեր, իսկ սրահի կողմն ամբողջովին առանց
 պատի, բոլորովին բաց ե, վոր հատուկ ե վարագույրով ծած-
 կելու. սենյակի յերկարությունն այնքան ե, վոր հաղիկ մի
 միջակ մեծության սեղանի վարագույր ծածկե ճակատը: Այս
 սենյակն եր հատկացրած հարսին և հարսանեկան առա-
 գաստին:

Հնում փայտի գործածությունը սահմանափակված չեր
 կտորների ծածկի, հարկարաժինների հեծանների և տախ-
 տակամած կամ առաստաղ շինելու մեջ, այլ փայտից չինում
 ելին նաև հաստ ու բարակ սըուներ, կամարներ, միա փեղկ
 կամ յերկբացիկ և լուսախաղաց գոներ, պատուհանների լու-
 սանցուց վանդակապատներ՝ վորոնք յերեմն պարզ, յեր-
 եմն ել չափազանց ճոխ քանդակազարդված ելին: Քանդա-
 կազարդ սյուների, կամարների, գոների ամենագեղցիկ
 քանդակազարդված որինակները հասել են մեզ, ինչպես Սե-
 քանդակազարդված կտորները, Սևանի գուռը և Անիում գանգած զերան-
 ներն ու կամարները, վորոնց մասին համառոտակի զրեցինք:
 Փայտի վրա ճարտար փորագրությունների հիանալի որի-
 նակներ կարելի յե ալժմ տեսնել Պետական Թանգարանում
 թե գոների և թե զրակալների վրա: Փայտի քանդակազար-
 դության ուրիշ ընտանեկան առարկաներ շատ են գտնված
 և մասամբ գտնվում են մասնավորների մոտ, ինչպես մահ-
 ճակալ, աթոռ, ափսե, գուշ և այլն:

Հարկարաժինների ծածկերի համար ընդհանրապես գործ
 ելին ածում մայրի, յեղենու և կաղնի գերաններ. իսկ քան-
 դակազարդ զոների, կամարների, սըուների համար ափելի
 հարմար փայտ ելին համարվում կաղնին, թմբին, հացին, ըն-

Գույքը և նման փալտեր, վորոնց որինակներն ունենք այդպէտ:

Պատմագրակիան տեղեկություններից յերեսում ե, վոր Հայաստանում փայտը բավականին առատ եր, վորովհետև բացի Բասենի անտառներից, հիշատակվում են այնպիսի ընդգարձակ անտառներ, վորոնց տեղում այսոր վոչինչ չկա. անկասպած ե, վոր Ժամանակի ընթացքում այդ անտառները մոհնչացել են:

不
志

Հայաստանում, յերկաթի բաղմակողմանի գործածության մասին տեղեկություններ շատ կան թե զբական աղբյուրներում և թե հայտնաբերված հնագիտական հետազոտություններով. վորոնցից մի քանի կարեորագույնների մասին կիրացատակեմ այստեղ. Ըստ. Մ. Խորենացու, առաջին դարում Յերվանդաշատի բերդի կառուցման ժամանակ, Յերվանդը շինել տիեզ յերկաթե սանդուխներ, վորոնց շինության կերպերը թեեւ այժմ մեզ հայտնի չեն. բայց պետք է, վոր այն ժամանակի յերկաթաւորձությունը զարգացման վորոշ աստիճանի հասած լիներ. Խորենացին գովեստով և խոռում այդ ասանդուխների ճարտարորեն շինվածքի մասին. Սակայն իսուինքս տեսել եմ Յերվանդաշատի բերդի մեջ, պարիսապներից թափած քարերի վրա յերկաթե կասի նշանները. Յերվանդաշատի բերդը շինված էր հնագույն պարիսապների նման մեծազանգված վորձաքարի անտաշ քարերով, վորոնց միշտանց մոտ լավ ամբացնելու համար կպցրած ելին յերկաթե կապերով. Թեեւ այժմ յերկաթները հանված են, սակայն կապի տեղերը փորված մնում են քարերի վրա. Հաջի-Բալբամ պլուղում շատ կարելի յեւ տեսնել այս քարերից, վորոնք ցած են գլորվել բերդից և գյուղացիք ողավելով մեծ զանգվածներից. գլորել, բերել են ու իրենց մրգաստանների և այցիների շուրջը պարիսապ շինել. Նույն յերկաթե կապի հետքեր այժմ կտրելի յեւ տեսնել ֆառնիի ծրդատա բերդի ավերակների մեջ. Այս բերդն ու նրա մեջի հոռվմեական վոճով կառուց-

ված գեղեցիկ հովանոսը շինված են մեծաղանգված սրբատառ
վորձաքարով ու կրաշաղախով, այնուամենաբնիվ բոլոր քա-
րերը սիացած են յերկաթե կապերով, Վոչ միայն պատերից
քանդված քարերի, այլ և կանգուն մնացած պահպանը բի-
զիա, քարերի սիացման տեղում նկատվում են յերկաթե կա-
պերի գոյության ապացույցները: Հիտագայում գանվել են
մարդիկ, վորոնք յերկաթներն ոգտագործելու համար կոտրել
տարել են կապերի տեղերը և հանու յերկաթները, վորոնց
ծայրերը ամրացրած ելին քարերում բացված ծակերի մեջ
հալած կապար լցնելով. թեև աշխատել են կապարները և
հանել, սակայն մեծ մասամբ դեռ մնում են ծաւերի մեջ:
Կապարով ամրացած ելին նաև հովանոցի պասկի մեջ ճար-
տարորեն քանդակված առյօնների աչքերը. ինչպես յերե-
փում ե առյօնների աչքերը շինված են յեղել արժեքավոր
քարերից, տեղափորված աչքի խոռոշների մեջ և հալված կա-
պարով ամրացրած. այդ աչքերն աչքմ առաջ բացառության
հանված են, սակայն տեղերում մնացել են հալված կապար-
ները: Բացի պատի և պարսպի քարերից, Տրդատա հովանոցի
ոգունասրահի սյուներին ել ամրացած են յերկաթե ծողիկնե-
րով ամրացրած կապարով: Անիում տակավին գոյություն
ունեն հին պլատոներից կամ պարիսապներից քանդված սըր-
բատաշ վորձաքարեր, վորոնք բերված են մի նոր պարսպի
շինության համար, սա այն պարիսպն ե, վոր պալատն ան-
ջատում եր բերդից կամ պարսպապատ քաղաքից: Այս պարս-
պի վրա նույնպես պարզորոշ նկատվում են քարերի վրայ՝
յերկաթե կապերի նշանները և ցուց են տալիս, վոր նախ-
կին պարիսպը հավանութեն 6-րդ կամ 7-րդ դա լրում շին-
ված եր յերկաթով կապված վորձաքարերով: Թովմա Արծ-
րունին պատմում ե, վոր Գագիկ Արծրունու պալատի շինու-
թյան ժամանակ, իրը թե յերկու հարյուր հազար լիսր յերկաթ
սպառվեց: Յես զիտեմ թե այս մեծ թիվը ինչ ամենատական ար-
ժեք ունի ներկայիս կշռաշափերի հետ, այնուամենաբնիվ կա-
րագ ենք յերգակացնել. վոր այս մեծ քանակությամբ յեր-

կաթը գործ և ածվել գլխավորապես պատերի քարերը կապելու համար:

Հին պատմագրերի մեջ հաճախ հանդիպում ենք բերդերի և ամրոցների գոնսերի նկարազրությունների, վորոնք առնասարակ բնորոշվում են յերկարապատ բիլեռավիճակ հատկանիշներով: Հայուստանի սահամաններում իմ կատարած հետախուզությունների ժամանակ չեմ տեսել պատմագրինների նկարազրած դռներ, սակայն, բախտի բերմամբ, պատանեկան հասակումս տեսել եմ նախկին Նիկոզոլսի (այժմ Շ. Գարանիսար) հին բերդի գլխավոր մուտքի յերկրացիկ դռուրի ծխնինների վրա տակավին կանգուն, վոր չափազանց նման եր պատմագրաց նկարազրության:

Յերբ Սենեքերիմ Արձրունին Վասպուրականի փոխարեն ստացավ Սերաստիայի նահանգը և իր ժողովրդով փոխադրվեց, հավանական ե, վոր այս շրջանն ես մանում եր Սենեքերիմի ստացած հողերի մեջ, նաև քաղաքն ու բերդը: Այս քաղաքի շրջանում յերկու վանք կա՝ Առաքելոց և Ս. Նշան անունով, վորոնց շինությունը վերազրվում է Ս. Նեքերիմի յերկու վորդիններին: Այս յերկու վանքերի շրջանում վոր Նիկոզոլսի մոտերքն են ուր Գալլ զետու անցնում ե մի ընդարձակ զաշտի միջով, ունի «Աշխարհուղաշտ» հայերեն անունը. այդ ընդարձակ զաշտի միջ յեղած բոլոր գյուղերի անունները մինչև այսօր հայերեն են. ինչպես՝ Բյուրգ, Անդրեաս, Ալամոնիկ, Ածպտեր կամ Արսրակ, Մշակնոց, Կթանց, Գոմեշտան, Սեքար և այլն. այս զաշտի յեղերքին ենաև Ո. խտանեսի հիշատակած Զուտարիմագյուղը, ուր կարմի հունական վանք, վորի մեջ կրոնական կրթություն ստացավ հայոց յեկ զեցուց բաժանվող և վրաստանի համար քաղեղոնիկ կաթողիկոս ուժվող կյուրոնը:

Անտարակույց այս շրջանի մեջ ընկած քաղաքը (Նիկոպոլիս կամ Կողոնիա) և բերդը նույնպես զրված ելին Սենեքերիմի տրամադրության տակ. վորովհատե ինչպիս յերեվում և բերդը նորոգության և յենթարկվել և նորոգության ժամանակ գլխավոր դռուրը Անիի ավագ դռուրը կատարյալ

նմանությամբ և շինված, վորի լուսանկարը մտադիր եմ հրատարակել Անիի ավագ դռան հետ բաղկատելու համար: Յերկրացիկ դուռը կամ իսկական փեղկերը կազմված ելին հետեւյալ կերպ: Փոխանակ տախտակի, քառակուսի հաստ գերանները միացրած ելին միմիանց և յերեսի կողմից ամուր կապված յերկութեւ հաստ գոտով, իսկ յերեսից 10—12 սնտ. լայնությամբ և մոտավորապես $\frac{1}{2}$ սնտ. հաստությամբ, դռան լայնության չափով կարված հաստ տախտակներ, ներքեից սկսած մինչեւ վերը բևեռներով ամբացրած և ամրող դուռը ծածկած ելին: յերկաթի հաստ շերտերի ստորին կողմը միշտ նախապես զամփած շերտի վրա նստած եր ավելի, քան 1 սանտիմ: Յերկաթյա հաստ շերտերը, վորոնք ամբացրած ելին կոնակի զերանների վրա, մոտավորապես 2—3 սնտ. խորանարդ բազմագիմի խոշոր գլխով մեխերով խիտ զամել ելին դուռը ծածկող յերկաթե շերտերը, վորով կազմվել եր մի անխորտակելի զրահ: Ներսի կողմից բացի փակող յերկաթյա սողնակից, շինված ելին հորիզոնական խորը ծակեր դռան մոտի յերկու պատերի մեջ հաստ զերաններ աղատ տեղավորելու չափ լայնությամբ, վորոնց մեջ զերաններ են յեղել. յերբ դուռը փակվում եր, նույն զերանները դուրս ելին քաշվում դռան ամրող լայնությամբ և ծայրը մոցը նում հանդիպակաց պատի վրա նույն նպատակով բացված ծակի մեջ: Այս ձեռվ շինված յերեք գերանները կոնակից փակում և ամրացնում ելին դուռը:

Անիից և Զվարթնոցից դուրս են յեկել գլխավորապես քարի մեծ սլուշերն իրենց խոլակներին և խարիսխներն միացնելու և հաստատելու յերկաթե կապեր: Անիից գանըլված և ջրամբարի յեղերքին, խեցեղեն բարակ խողովակների հետ նաև յերկաթե խողովակ, մոտավորապես յերկու սանտիմ տրամագիծ ունեցող ծակով վորոնք հաստուկ ելին պալատի զանազան աղբյուրներին ու բաղնիքներին ջուր մատակարաբեկու համար:

4092

Հ Ա Խ Հ ԼՈՒՄԺՈՂԿՈՄԱՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՖՈՆԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Պրոֆ. ՀԱԿՈԲ ՄԱՍՆԱՆԴՅԱՆ.—Կըլոները և չափերը հնագույն հայ աղբյուրներում 1 ռ. 50 կ.
2. Պրոֆ. Մ. ԱԲԵՂՅԱՆ.—Հայոց լեզվի տեսությունն (սպառաձ) 3 ռ. —
3. Պրոֆ. ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայերեն Արմատական Բառարան,
Դ. հատոր, 1350 էջ.
4. ՅԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.—Հին Յերեան (նկարագրություն) 2 ռ. 50 կ.
5. ՅԵՐՎԱՆԴ ԼՈԼՈՅԱՆ.—Դամրանների պեղումներ Խորհրդային Հայաստանում (բաղմաթը նկարներով) 3 ռ. —
6. Պրոֆ. ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայերեն Արմատական Բառարան
1294 էջ.
7. Պրոֆ. ՀԱՎԵ ՀԱԿՈԲՅԱՆ.—Ուղեգրություններ, Ա. հատոր,
ԺԳ.—ԺԶ. դար (լաթակաց) 10 ռ. —
8. ՅԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ.—Միքայել Նալբանդյանի Դիվան
(լաթակաց) 8 ռ. —
9. Պրոֆ. ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒՅՅԱՆ.—Մանր հետազոտություններ 2 ռ. 50 կ.
10. ՍՊ. ՄԱԼԻՔՅԱՆ.—Կոմիտասի ստեղծագործության անալիզը 1 ռ. 50 կ.
11. Թ. ԹՈՐՈՄԱՆՅԱՆ.—«Շընանյութերի գործածությունն հին Հայաստանում» 1 ռ. 50 կ.

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

12. Պրոֆ. ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ.—Հայերեն Արմատական Բառարան, Զ. հատոր
(1600 էջ.)
13. Պրոֆ. Մ. ԱԲԵՂՅԱՆ.—Հայոց լեզվի տաղաշափություններ:
14. Պրոֆ. Ա. ԽՈՂՅՄՅԱՆ.—Հայաստանի սեպագրական ցրջանի քննական
պատմություն:



«Ազգային գրադարան



NL0297662

28.138

ԿԵՆՔ 1 Ռ. 50 Կ.